Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[1] Դուրս գրման ամսաթիվ		
25	Փետրվար	2019 թ.
[4] Մատակարարման ամսաթիվ		
25	Փետրվար	2019 թ.

[2] Սերիա	[3] Համար
Ա	2952027625

Ճշգրտվող հաշվի	
Սերիա	Համար
Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ — N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 5 8 9 1 2 8
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն — N 900011474286
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ Վ. ՎԱՂԱՐՇՅԱՆ 13Ա
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն:
	Լիազորագիր — Համար:
	Լիազորագիր — Ամսաթիվ:

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	90753018 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
(անունը, ազգանունը)

25/02/2019 15:59:05

Ստացող

պաշտոնը, ստորագրությունը, (անունը, ազգանունը)

պաշտոնը, ստորագրությունը, (անունը, ազգանունը)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հետմահու դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

24-ը հուլիսի, 2018թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Գ.Բաղալյանս, վերանայելով թիվ 90753018 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի մայիսի 6-ին՝ ժամը 07[25]-ի սահմաններում, ՀՀ ՊՆ թիվ 21127 զորամասի պաշտպանական շրջանում տեղակայված թիվ 30 «Հակոբասար» կոչվող մարտական դիրքի առաջին դիտակետի մուտքի ձախ հատվածում, հայտնաբերվել է նույն դիտակետի դիտորդ, 2-րդ հրաձգային գումարտակի 4-րդ վաշտի 3-րդ դասակի 2-րդ ջոկի գնդացրորդ, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Լևոն Թորոսյանի դիակը՝ ծնոտի ստորին և գլխի գագաթային հատվածների միջանցիկ հրազենային վնասվածքներով:

Դեպքի առթիվ նույն օրը ՀՀ ՔԿ ԶՔԳՎ վեցերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2018 թվականի մայիսի 7-ին որոշում է կայացվել Լևոն Թորոսյանի հորը՝ Արսեն Թորոսյանին, տուժողի իրավահաջորդ ճանաչելու մասին, իսկ Ռուբեն Մարտիրոսյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ:

2018 թվականի մայիսի 8-ին Վալոդյա Հոխիկյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է՝ ՀՀ ՊՆ 21127 զորամասի հրամանատարության հսկողության հանձնելը:

Որպես կասկածյալ Վալոդյա Հոխիկյանը տվել է խոստովանական ցուցմունք՝ ընդունելով ստորադաս ծառայողներ Վազգեն Իսախանյանի և Լևոն Թորոսյանի հասցեին հայհոյանքներ տալու փաստերը: Միևնույն ժամանակ բացառել է, որ տված հայհոյանքի պատճառով Լևոն Թորոսյանը կարող էր ինքն իրեն կրակել:

Նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ 2018 թվականի մայիսի 14-ին Վալոդյա Հոխիկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ 21127 զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի 4-րդ վաշտի 2-րդ դասակի 3-րդ ջոկի հրամանատար, պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով կրտսեր սերժանտ, նույն զորամասի հրամանատարի 2018 թվականի ապրիլի 25-ի թիվ 0131 հրամանով 2018 թվականի ապրիլի 27-ից մինչև մայիսի 11-ը մարտական հերթապահության ընդգրկված լինելով զորամասի պաշտպանական շրջանում գտնվող «Հակոբասար» կոչվող մարտական հենակետում, որպես մարտական դիրքի ավագի օգնական, իսկ 2018 թվականի ապրիլի 29-ից նշանակվելով որպես նույն դիրքի ավագ և հանդիսանալով պետ, 2018 թվականի մայիս ամսվա սկզբներին՝ քննությամբ չպարզված օրը, նույն մարտական հենակետում որպես դիտորդներ ծառայության նշանակված պարտադիր ժամկետային զինծառայողներ, իր ստորադասներ, շարքայիններ Վազգեն Վաչագանի Իսախանյանի և

Լևոն Արսենի Թորոսյանի կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելու՝ իրենց հանձնարարված խրամուղին թերի մաքրելու և դրա համար դիտողության արժանանալու կապակցությամբ, սեռական բնույթի հայհոյանք է տվել վերջիններիս հասցեին՝ անպարկեշտ ձևով ստորացնելով նրանց պատիվն ու արժանապատվությունը:

Ապա, հաջորդ օրը Լևոն Թորոսյանի կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելու՝ իրենց հանձնարարված խրամուղին մաքրելուց հրաժարվելու կապակցությամբ, սեռական բնույթի հայհոյանք է տվել վերջինիս հասցեին՝ անպարկեշտ ձևով ստորացնելով նրա պատիվն ու արժանապատվությունը:

Այնուհետև, 2018 թվականի մայիսի 5-ին՝ ժամը 19^{00}-ից 21^{00}-ի սահմաններում, նկատելով, որ առաջնագծում որպես դիտորդ ծառայություն իրականացնող, շարքայիններ Լևոն Թորոսյանը և Վազգեն Իսախանյանը, տարբեր կրակակետերում ծառայություն իրականացնելու փոխարեն, որպես դիտորդ ծառայություն են իրականացնում միասին՝ թիվ 1 կրակակետում, վերջիններիս կողմից զինվորական ծառայության պարտականությունները ոչ պատշաճ կատարելու կապակցությամբ սեռական բնույթի հայհոյանք է տվել Լևոն Թորոսյանի և Վազգեն Իսախանյանի հասցեին՝ անպարկեշտ ձևով ստորացնելով նրանց պատիվն ու արժանապատվությունը:

Այսինքն, Վալոդյա Հոխիկյանին մեղսագրվել են ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված 3 դրվագ հանցավոր արարքներ:

Առաջադրված մեղադրանքում Վալոդյա Հոխիկյանն իրեն լիովին մեղավոր է ճանաչել և տվել խոստովանական ցուցմունք:

2018 թվականի հունիսի 7-ին քրեական գործի նախաքննությունը շարունակվում է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում:

Նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ 2017 թվականի հուլիսի 14-ին ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի 14/3 փողոցի թիվ 10 տանը հաշվառված Լևոն Թորոսյանը տարածքային զինկոմիսարիատից զորակոչվել է ՀՀ ՊՆ 21127 զորամաս:

Զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի 4-րդ վաշտի 3-րդ դասակի 2-րդ ջոկի գնդացրորդ, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Լևոն Թորոսյանը 2018 թվականի փետրվարի 10-ին ՀՀ ՊՆ թիվ 21127 զորամասի հրամանատարի թիվ 34 հրամանի համաձայն գործուղվել է ՀՀ ՊՆ 60925 ուսումնական զորամաս, որտեղ անցնելով սերժանտական դասընթացներ՝ ֆիզպատրաստության քննության ժամանակ ստացել է անբավարար գնահատական և 2018 թվականի ապրիլի 28-ին համապատասխան հրամանի համաձայն՝ վերադարձել է ՀՀ ՊՆ 21127 զորամաս:

Համաձայն ՀՀ ՊՆ թիվ 21127 զորամասի հրամանատարի 2018 թվականի ապրիլի 25-ի թիվ 0131 հրամանի՝ 2-րդ ՀԳՄ-ի անձնակազմը 2018 թվականի ապրիլի 27-ից մինչև մայիսի 10-ն ընդգրկվել են մարտական հերթապահությունում: Գնդի պահպանության տեղամասի «Հակոբասար» մարտական դիրքում մարտական հերթապահության են ընդգրկվել՝ 4-րդ հրաձգային վաշտի 3-րդ հրաձգային դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ Գառնիկ Ավետիսյանը՝ որպես «Հակոբասար» և «18» մարտական դիրքերի պատասխանատու,

4-րդ հրաձգային վաշտի 2-րդ դասակի 3-րդ ջոկի հրամանատար, կրտսեր սերժանտ Վալոդյա Հոխիկյանը սկզբում որպես դիտորդ, իսկ 2018 թվականի ապրիլի 28-ից կատարել է նույն դիրքի ավագի պարտականությունները,

4-րդ հրաձգային վաշտի 3-րդ դասակի 2-րդ ջոկի նռնակաձիգ, շարքային Վախթանգ Վարդանյանը,

4-րդ հրաձգային վաշտի 3-րդ դասակի 3-րդ ջոկի ավագ հրաձիգ, շարքային Վազգեն Իսախանյանը,

4-րդ հրաձգային վաշտի 3-րդ դասակի 3-րդ ջոկի ավագ հրաձիգ, շարքային Ալբերտ Բախշյանը,

4-րդ հրաձգային վաշտի 3-րդ դասակի 3-րդ ջոկի ՊԿ-ի գնդացրորդ, շարքային Գևորգ Հակոբյանը,

4-րդ հրաձգային վաշտի 3-րդ դասակի դիպուկահար, շարքային Ալեքսան Գրիգորյանը և հետախուզական դասակի հետախույզ, ՊԿ-ի գնդացրորդ, շարքային Սևակ Քարտաշյանը:

2018 թվականի ապրիլի 28-ին՝ ժամը 22^{23}-ին զորամասի 2-րդ հետախուզական գումարտակի հրամանատար, փոխգնդապետ Գ.Խաչատրյանի կողմից զորամասի հրամանատարին ներկայացվել է թիվ 347 հեռախոսագիրը, համաձայն որի առաջարկվել է ՀՀ ՊՆ 60925 ուսումնական զորամասից վերադարձած 2-րդ հրաձգային գումարտակի զինծառայողների՝ շարքային Լևոն Թորոսյանին և կրտսեր սերժանտ Մինաս Միլիտոնյանին և սերժանտ Նարեկ Պետրոսյանին ընդգրկել մարտական հերթապահության և նշանակել գումարտակի «Կոբրա» հրամանատարական դիտակետում:

2018 թվականի ապրիլի 29-ին՝ ժամը 17^{55}-ին, ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, մել այլ հեռախոսագրով Լևոն Թորոսյանը և Մինաս Միլիտոնյանը հանվել են «Կոբրա» հրամանատարական դիտակետից և նշանակվել «Հակոբասար» մարտական դիրքում՝ որպես դիտորդներ: Նշված հեռախոսագրի հիման վրա արձակվել է զորամասի հրամանատարի 2018 թվականի ապրիլի 30-ի թիվ 101 հրամանը և կատարվել է համապատասխան փոփոխությունը: Փոփոխության արդյունքում Ալեքսան Գրիգորյանը տեղափոխվել է «18» մարտական դիրք:

«Հակոբասար» մարտական հենակետում տարածքների մաքրության համար ծառայության նշանակված զինծառայողների միջև կատարվել է աշխատանքների բաժանում, այդ թվում՝ սնունդը բերելու, պատրաստելու և սպասքեղենը լվանալու հարցերով: Բացի տարածքների մաքրության և ինժեներական աշխատանքների կատարումից Լևոն Թորոսյանը և Վազգեն Իսախանյանը ստանձնել են նաև սպասքեղենը լվանալու աշխատանքը: Վերջիններս նշված աշխատանքները կատարել են առանց դժգոհությունների:

2018 թվականի մայիսի 1-ին՝ ժամը 13^{00}-ից 15^{00}-ընկած ժամանակահատվածում, «Հակոբասար» հենակետ է ժամանել ավագ լեյտենանտ Մխիթար Վարդազարյանը՝ ծառայությունը ստուգելու համար, ով դժգոհ է մնացել Լևոն Թորոսյանին և Վազգեն Իսախանյանին հանձնարարված տարածքի մաքրությունից: Նշված հարցի հետ կապված դիրքի ավագ Վալոդյա Հոխիկյանը Լևոն Թորոսյանին և Վազգեն Իսախանյանին հայհոյել է՝ *«Ինձ դեմ փվողի լավը .....»*: Դրանից հետո վերջիններս խոստացել են մաքրել տարածքը:

Հաջորդ օրը Վալոդյա Հոխիկյանը շրջել է և տեսել, որ տարածքը կրկին մաքրված չէ, իսկ Վազգեն Իսախանյանից պարզել է, որ Լևոն Թորոսյանը տարածքը չի մաքրում: Լևոն Թորոսյանին կանչել է և հարցրել, թե ինչու չի մաքրում տարածքը, իսկ վերջինս պատասխանել է. «Չեմ մաքրելու»: Վալոդյա Հոխիկյանն արձագանքել է և ասել. *«Սրեղ էտ ձև մի կ...ս չկա, որ գործ չանի»*, ապա ավելացրել է, որ իրենից սկսած բոլորն էլ աշխատում են: Այնուհետև, Լևոն Թորոսյանը փոխել է խոսքը և ասել, որ ոչ թե չի

ցանկանում մաքրել, այլ չի կարողանում մաքրել: Այդտեղ գտնվող Վազգեն Իսախանյանն ասել է, որ մաքրելու ձևը ցույց կտա: Ապա Վալոդյա Հոխիկյանը ձախ ձեռքով բռնել է Լևոն Թորոսյանի զինվորական վերնազգեստի աջ ուսի հատվածից և քաշելով դեպի Վազգեն Իսախանյանի կողմը ասել է. *«Գնա, թող ձևը ցույց տա»*: Այնուհետև, նրանց ասել է. *«Ինձ դեմ տվողին վատ քֆուր եմ անում»*, իսկ վատ հայհոյանք ասելով նկատի է ունեցել սրբության վերաբերող հայհոյանքը: Նշված խոսակցությանը ներկա է գտնվել Մինաս Միլիտոնյանը:

2018 թվականի մայիսի 5-ին ժամը 10^{00}-ի սահմաններում, հենակետի պատասխանատու Գառնիկ Ավետիսյանը հանձնարարել է կատարել ինժեներական աշխատանքներ, և առաջնագծում անձամբ կանգնել է որպես դիտորդ, իսկ Սևակ Քարտաշյանը՝ կացարանի մոտ արթուն հերթափոխ: Մյուսները սկսել են կատարել տարածքների մաքրության և ինժեներական աշխատանքները, որի ընթացքում Լևոն Թորոսյանը բարձրաձայն ասել է. *«Հզվել եմ էս ամեն ինչից»*:

Վալոդյա Հոխիկյանը զայրացել է նրա վրա և ասել. *«Էդ վոնց ա մյուս տղերքը չեն զզվել, իրենցից լավ տղա էս»*, միաժամանակ աջ ձեռքով բռնել է նրա զինվորական համազգեստի կրծքավանդակի հատվածից և մի քանի անգամ քաշելով թափահարել է: Ապա Լևոն Թորոսյանին հարցրել է, թե նրա համար «Հակոբասար» հենակետում է լավ, թե «18» մարտական հենակետում, քանի որ Լևոն Թորոսյանը մեկ անգամ մարտական հերթապահության է ընդգրկվել «18» մարտական դիրքում: Լևոն Թորոսյանը պատասխանել է, որ տարբերություն չկա: Դրանից հետո Վալոդյա Հոխիկյանը հարցրել է. *«Տուն զանգում էս, արա սկի տնեցիքդ քեզանով չեն հափաքրքրվում»*, իսկ Լևոն Թորոսյանը պատասխանել է, որ մի քանի օր առաջ խոսել է ընտանիքի հետ և վերջիններս հետաքրքրվել են իր ծառայությունից:

Միջամտել է Վազգեն Իսախանյանը և ասել է. *«Լավ թարգի, ինչ ես կպել տնեցիքից»*, ինչին արձագանքել է և ասել. *«Գ....ն լակոտ ա»*, սակայն վերջին հայհոյանքը հավանաբար Լևոն Թորոսյանը չի լսել, քանի որ քիչ հեռու հատվածում կատարել է մաքրություն:

Ժամը 17^{00}-ից 19^{00}-ն ընկած ժամանակահատվածում Լևոն Թորոսյանի և Ալբերտ Բախշյանի հետ Վալոդյա Հոխիկյանը գնացել են և թիվ 20 մարտական հենակետից սննդամքերք են բերել, քանի որ մեքենան իրենց դիրք չի հասել:

Ժամը 19^{00}-ին կատարվել է հերթափոխ, Լևոն Թորոսյանը և Վազգեն Իսախանյանն առանց ուղեկցության գնացել են առաջնագիծ և այնտեղ փոխարինել են ավագ լեյտենանտ Գառնիկ Ավետիսյանին, ով վերադարձել է կացարանի մոտ, իսկ որոշակի ժամանակ անց նա Սևակ Քարտաշյանի հետ գնացել է թիվ 20 մարտական հենակետ:

Դրանից հետո կացարանի արթուն հերթափոխ Մինաս Միլիտոնյանը դուրս է կանչել Վալոդյա Հոխիկյանին և ասել, որ զուգարանի կողմից ոտնաձայներ է լսել: Վերջինս կացարանից վերցրել է զենքը և գնացել առաջնագիծ՝ տարածքը զննելու: Կողմնակի անձանց չհայտնաբերելով՝ գնացել է դեպի դիտորդների ծառայության վայր: Հասնելով թիվ 3-րդ կրակակետի մոտ՝ նկատել է, որ դիտորդն այնտեղ չէ, որից հետո թիվ 1 կրակակետից մոտ 10 մետր հեռավորությունից մի քանի անգամ ձայն է տվել Վազգեն Իսախանյանին, սակայն վերջինս չի պատասխանել: Դրանից հետո գնացել է թիվ 1 կրակակետ, որտեղ միասին գտնվել են Լևոն Թորոսյանը և Վազգեն Իսախանյանը: Նրանց հարցրել է. *«Էս որ ձեն եմ տալիս, չեք լսում»*, ինչին Վազգեն Իսախանյանը պատասխանել է, որ չեն լսել: Հաշվի առնելով, որ երկու դիտորդները դեռ այդ ժամին չպետք է միասին լինեին, բացի այդ էլ պետք է ուշադիր լինեին և իրեն ավելի

շուտ նկատեին, այդ պատճառով Վալոդյա Հոխիկյանը զայրույթից ասել է. *«Նախույ եղեք խորշից»*: Վազգեն Իսախանյանը Վալոդյա Հոխիկյանին հակադարձել է և ասել. *«Լավ չես այ գ....ն»*, ինչից հետո նրան ասել է. «Իջնես ներքև ծ.....ու եմ», որից հետո գնացել է կացարան: Լևոն Թորոսյանն այդ ժամանակ ոչինչ չի ասել, իսկ այդ թեմայով Վազգեն Իսախանյանի հետ հետագայում խոսակցություն չի եղել:

Ժամը 21^{00}-ի սահմաններում կատարվել է հերթափոխ՝ առաջնագծում Լևոն Թորոսյանին և Վազգեն Իսախանյանին փոխարինել են Գևորգ Հակոբյանը և Վախթանգ Վարդանյանը, իսկ Լևոն Թորոսյանը և Վազգեն Իսախանյանն իջել են կացարանի մոտ և կանգել են արթուն հերթափոխ, Վազգեն Իսախանյանը՝ կրակակետ-դիտակետում, իսկ Լևոն Թորոսյանը՝ կացարանի մոտ:

Ժամը 22^{00}-ի սահմաններում Գառնիկ Ավետիսյանը մոտեցել է կացարանին, որի դիմաց հանդիպել է Լևոն Թորոսյանին, սակայն վերջինս նշանաբառ չի հարցրել: Խոսակցության ձայնից Վալոդյա Հոխիկյանը դուրս է եկել կացարանից և հետաքրքրվել է, թե ինչու նշանաբառը չի հարցրել, ինչին Լևոն Թորոսյանը պատասխանել է, որ իմացել է, թե միայն կրակակետ-դիտակետում կանգնած արթուն հերթափոխը պետք է նշանաբառ հարցնի:

Այնուհետև, կրակակետ-դիտակետում Վազգեն Իսախանյանին հայտնաբերել են քնած, որից հետո Գառնիկ Ավետիսյանն արթնացրել է նրան, փոխարինել է և ուղարկել հանգստանալու: Կացարանի մոտ Վալոդյա Հոխիկյանը Լևոն Թորոսյանին ասել է. *«Դեմ կվիք արա»* և մտել է կացարան, իսկ Լևոն Թորոսյանը ժպտացել է և ոչինչ չի պատասխանել:

Ժամը 23^{00}-ի սահմաններում Գառնիկ Ավետիսյանն արթնացրել է Վալոդյա Հոխիկյանին և Սևակ Քարտաշյանին, որպեսզի գնան առաջնագիծ և փոխարինեն դիտորդներին, քանի որ Ալբերտ Բախշյանը և Մինաս Միլիտոնյանն իրենց լավ չեն զգացել: Կատարել են հրամանը և մինչև ժամը 01^{00}-ն գտնվել են առաջնագծում: Ժամը 01^{00}-ի սահմաններում առանց ուղեկցության առաջնագիծ են գնացել Լևոն Թորոսյանը և Վազգեն Իսախանյանը, փոխարինել Վալոդյա Հոխիկյանին և Սևակ Քարտաշյանին, ովքեր իջել են ներքև, փոխարինել արթուն հերթափոխում Գառնիկ Ավետիսյանին և Վախթանգ Վարդանյանին:

Ժամը 02^{00}-ի սահմաններում Սևակ Քարտաշյանի հոգնածության պատճառով վերջինիս փոխարինել է Գառնիկ Ավետիսյանը: Որոշակի ժամանակ անց վերջինս հեռախոսազանգ է ստացել, մտել է կացարան և խոսել: Այդ ընթացքում Վալոդյա Հոխիկյանը ձայն է տվել Վազգեն Իսախանյանին և Լևոն Թորոսյանին՝ ծառայությունը ստուգելու համար, ինչին վերջիններս արձագանքել են:

Ժամը 07-ի սահմաններում Լևոն Թորոսյանը հերթական անգամ արթանացել է՝ Վազգեն Իսախանյանի հետ առաջնագծում ծառայություն կատարելու համար: Դրսում վերջինս օգտվել է Գևորգ Հակոբյանի հեռախոսահամարից և զանգահարել է մոր հեռախոսահամարին և խոսել ծնողների հետ 4 րոպե 12 վայրկյան տևողությամբ: Ըստ Լևոն Թորոսյանի ծնողների ցուցմունքների՝ իրենց որդին արտառոց կամ կասկածելի խոսակցություն չի վարել:

Ժամը 07^{05}-ի սահմաններում Լևոն Թորոսյանը հանդերձավորվել է և առանց ուղեկցության գնացել է առաջնագիծ՝ թիվ 1 խրամաբջիջ, փոխարինել Մինաս Միլիտոնյանին և Ալբերտ Բախշյանին:

Մարտական դիրքում եղած զինծառայողների ցուցմունքներով պարզվել է, որ դեպքի պահին առաջնագծի թիվ 1 խրամաբջջի մոտ եղել է միայն Լևոն Թորոսյանը, Վազգեն Իսախանյանը և Ալբերտ Բախշյանը՝ զուգարանում, Գևորգ Հակոբյանը՝

գետնատնակի մոտ՝ մինչև Ալբերտ Բախշյանի վերադարձը, Մինաս Միլիտոնյանը, Վալոդյա Հոխիկյանը, Սևակ Քարտաշյանը, Վախթանգ Վարդանյանը, Գառնիկ Ավետիսյանը՝ գետնատնակում:

Ժամը 07[25]-ի սահմաններում առաջնագծի թիվ 1 խրամաբջջի մոտ կատարվել է մեկ կրակոց, որից հետո Գևորգ Հակոբյանը տագնապ է հայտարարել: Ալբերտ Բախշյանը Վազգեն Իսախանյանի հետ վազել են դեպի առաջնագիծ, որի ընթացքում Ալբերտ Բախշյանը մտածելով, որ դիրքի վրա թշնամու կողմից հարձակում է եղել, չորս մենահատ կրակոցներ է արձակել անտառի ուղղությամբ: Նրանց հետ գրեթե միաժամանակ առաջնագիծ է հասել նաև Վալոդյա Հոխիկյանը: Վերջիններս թիվ 1 կրակակետի ձախ կողմում անշարժ դիրքում նստած տեսել են Լևոն Թորոսյանին՝ ՁԿԳ-74 տեսակի գնդացիրը ոտքերի արանքում, իսկ վերջինիս քթի և բերանի շրջանից արյուն է հոսել: Վալոդյա Հոխիկյանը մատով ստուգել է Լևոն Թորոսյանի պարանոցի շրջանի զարկերակը և պարզել է, որ նա մահացած է: Կատարվածի մասին զեկուցել են վերադաս հրամանատարությանը, իսկ քիչ անց դեպքի վայր են ժամանալ քննիչը, դատաբժիշկը և կատարել են անհրաժեշտ գործողություններ:

Նշված հանգամանքները հաստատվել են մարտական դիրքում եղած ծառայողներ, վկաներ՝ Գառնիկ Ավետիսյանի, Վալոդյա Հոխիկյանի, Վազգեն Իսախանյանի, Միսակ Միլիտոնյանի, Վախթանգ Վարդանյանի, Ալբերտ Բախշյանի, Գևորգ Հակոբյանի, Ալեքսան Գրիգորյանի, Սևակ Քարտաշյանի ցուցմունքներով ևս: Մասնավորապես, վկաներ Վազգեն Իսախանյանը և Միսակ Միլիտոնյանը հաստատել են Վալոդյա Հոխիկյանի կողմից հիշյալ ժամանակահատվածներում Լևոն Թորոսյանին հայհոյելու փաստերը:

Դեպքի վայրի զննության արձանագրության համաձայն՝ դեպքի վայրը գտնվում է ՀՀ ՊՆ թիվ 21127 զորամասիպաշտպանական շրջանում գտնվող «Հակոբասար» կոչվող մարտական հենակետի թիվ 1 խրամաբջիջը և դրա հարակից տարածքը: Դիմացի հատվածում առկա է 2 ճյուղերով չորացած կոճղ: Կոճղի առջևի հատվածում կատարված է փորվածք, որտեղից սկսվում է և դեպի առաջնագիծ է ձգվում խրամուղին: Կոճղը փորվածքի հատակից գտնվում է 80 սմ բարձրության վրա: Կոճղի ստորին հատվածում՝ փորվածքի եզրին, առկա են ցցված, անկանոն եզրերով քարաբեկորներ, որոնցից մեկի վրա՝ նստած վիճակում, աջ ուսով կոճղին հենված դիրքում, թիկունքով դեպի փորվածքի եզրը գտնվում է Լևոն Թորոսյանի դիակը: Քարաբեկորը, որի վրա նստած է դիակը, դետնից գտնվում է 32 սմ բարձրության վրա: Դիակի գլուխը թեքված է դեպի աջ, հենված է վերոնշյալ ծառի կոճղին և աջ ուսահոդի շրջանին: Դիակի կզակային հատվածը հենված է «ԿՁԳ-74» տեսակի գնդացրի փողի ծայրին: Դիակի վերջույթները ծալված են 90 աստիճան անկյան տակ և հենված են ստորին վերջույթներին, որոնցից աջ վերջույթը գտնվում է թիկնային մակերեսի շրջանում, դաստակի մատները ծալված են: Ձախ վերին վերջույթը ստորին վերջույթի շրջանում հենված է թիկնային մակերեսի շրջանին: Ստորին վերջույթները ծնկային հոդերում ծալված են 90 աստիճան անկյան տակ և հենված են գետնին: Դիակի գլխի բրդյա սև գլխարկի աջ կեսի գագաթ-քունքային շրջանում առկա է անկանոն եզրերով մոտ 3.3x2 սմ չափերով պատռվածք: Դիակի ստորին վերջույթները ծնկային հոդերի շրջանում գտնվում են բացված վիճակում, որոնց միջև առկա հեռավորությունը 43 սմ է: Դիակի ոտնաթաթերը գտնվում են դեպի դուրս ուղղված վիճակում, որոնք կրունկային հատվածում միմյանցից գտնվում են 8 սմ հեռավորության վրա, իսկ ոտնաթաթերի ծայրերի շրջանում՝ 40 սմ հեռավորության վրա:

Դիակի ոտքերի արանքում առկա է «ԿՁԳ-74» տեսակի գնդացիր, որը խզակոթի հատվածով հենված է գետնին, իսկ փողի ծայրը հենված է կզակին: Խզակոթը հենված ձախ ոտքի սրունք-թաթային հատվածին՝ ներսային կոճի շրջանին: Խզակոթը գտնվում է աջ ոտքի կիսաճտքավոր կոշիկի կրունկից 3 սմ հեռավորության վրա: Զենքը գազախողովակի հատվածով հենված է շեքային հատվածին, զենքին ամրացված է պահեստատուփ, որի ծայրը հենված է ձախ ոտքի ծնկային հատվածին՝ ներսի կողմից: Զենքի բռնակը ձախ կողմով հենված է ձախ ոտքի զինվորական կիսաճտքավոր կոշիկի ներսային վերևի հատվածին՝ ձախ սրունքի ներսային մակերեսի ստորին երրորդի շրջանում: Զենքի ապահովիչը գտնվում է բաց վիճակում՝ մենահատ կրակոցի դիրքում:

Դիակի աջ կողմում՝ գետնին, փորվածքի եզրից 8 սմ և աջ ոտնաթաթի դրսային հատվածից 12 սմ հեռավորության վրա՝ արյան լճակի մեջ, առկա է 1 հատ պարկուճ, որն առգրավվել ու փաթեթավորվել է թիվ երկու փաթեթում: Գնդացրին ամրացված է փոկ, որի վրա առկա են ներծծված արնանման հետքեր:

Դիակի դատաբժշկական փորձաքննության թիվ 0604/12 եզրակացության համաձայն՝ Լևոն Թորոսյանի մահը վրա է հասել գլխուղեղի դիֆուզ վնասվածքից, կենսական կարևորագույն ֆունկցիաների սուր խանգարումից՝ գլխի շրջանի հրազենային- գնդակային, թափանցող միջանցիկ վիրավորում ստանալու հետևանքով, որն էլ գտնվում է ուղղակի պատճառական կապի մեջ մահվան հետ: Դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերվել են հրազենային մուտքի անցք՝ ստորկզակային շրջանում, հրազենային ելքի անցք՝ աջ գագաթային շրջանու, վերքային խողովակի ընթացքով՝ բերանի ստոծանու, աջից՝ բերանի խոռոչի փափուկ հյուսվածքների, լեզվի, գանգի թաղի և հիմի ոսկրերի՝ բաց, բեկորային կոտրվածքներ՝ գլխուղեղի կարծր թաղանթի պատռվածքներով, կարծր թաղանթի և գանգաթաղի ոսկրերի դեֆեկտներով, արյունազեղումներ՝ գլխի մաշկի տակ, աջ և ձախ քունքամկաններում, տարածուն վեր և ենթակարծրենային, արախնոիդալ, սուբարախնոիդալ, միջգալարային և ներուղեղային արյունազեղումներ, արյունահավաքներ՝ ուղեղիկի, ուղեղաբնի, միջգալարային ու ներուղեղային մուգ կարմին գույնի հեղուկ արյուն, աննշան քանակի արյան մակարդուկներով՝ գլխուղեղի փորոքներում, որոնք պատճառվել են կենդանության օրոք, մահվանից՝ գործնականորեն անմիջապես առաջ (վայրկյաններ կամ 1-2 րոպե առաջ), բաղադրության մեջ պղինձ պարունակող գնդակով լիցքավորված հրազենից, կրակոցի լրացուցիչ գործոնների, բոցի ազդեցության սահմաններում կատարված՝ թվով մեկ կրակոցով: Նման մարմնական վնասվածքները կենդանի անձանց մոտ սովորաբար համարվում են՝ առողջությանը ծանր վնաս պատճառող, կյանքին վտանգ սպառնացող, իսկ տվյալ դեպքում բերել են մահվան: Հրազենային, գնդակային վիրավորումն ստանալու պահին, հրազենի փողաբերանի լայնական կտրվածքը, ամենայն հավանականությամբ ուղղված է եղել դեպի Լևոն Թորոսյանի գլխի ստորկզակային շրջան, ընդ որում հրազենային գնդակային վերքային խողովակն ունի՝ վարից վեր, առջևից հետ, ձախից քիչ աջ ուղղություն: Հայտնաբերվել են նաև արյունազեղումներ՝ առնանդամի, փոշտի ձախ կեսի շրջաններում ստորադիր փափուկ հյուսվածքներում, քերծվածք՝ պարանոցի առաջային մակերեսին, որոնք առաջացել են կենդանության օրոք, մահվանից՝ գործնականորեն անմիջապես առաջ, սահմանափակ մակերես ունեցող բութ առարկաներով: Նման վնասվածքները կենդանի անձանց մոտ, սովորաբար համարվում են՝ առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող, որոնք չեն գտնվում ուղղակի պատճառական կապի մեջ՝ մահվան անմիջական պատճառի հետ:

Դատաձգաբանական փորձաքննության թիվ 44961803 եզրակացության համաձայն՝ փորձաքննության ներկայացված գնդացիրը հանդիսանում է «ՌՊԿ-74» տեսակի, 6896 համարի, 5.45 մմ տրամաչափի, գործարանային արտադրության գնդացիր, հանդիսանում է հրազեն, տեխնիկապես սարքին է և պիտանի է կրակելու համար: Ներկայացված 1 հատ 5.45 մմ տրամաչափի պարկուճը կրակված է «ՌՊԿ-74» տեսակի, 6896 համարի գնդացրից:

Փորձաքննության ներկայացված զինվորական սաղավարտի գագաթային աջ հատվածում՝ առջևի ազատ եզրից 22 սմ դեպի հետ և աջ ազատ եզրից 21 սմ դեպի ձախ, առկա է միջանցիկ, անկանոն տեսքի վնասվածք՝ 60x49մմ չափերի: Գլխարկի գագաթային հատվածում՝ ստորին ազատ եզրից 16 սմ դեպի վեր՝ առկա է միջանցիկ, անկանոն տեսքի վնասվածք՝ 28x14մմ չափերի:

Սաղավարտի և գլխարկի նկարագրված վնասվածքները հրազենային-գնդակային են, առաջացել են պղինձ պարունակող գնդակով, ներքևից վերև ուղղությամբ կատարված մեկ կրակոցի հետևանքով և հանդիսանում են ելքի վնասվածքներ:

Ներկայացված զրահաբաճկոնի, զինվորական ձմեռային բաճկոնի, զինվորական բաճկոնի, շապիկի, զինվորական անդրավարտիքի, վարտիքի, մեկակական զույգ կոշիկների և գուլպաների, ինչպես նաև գոտեպայուսակի հետազոտությամբ դրանց վրա հրազենային բնույթի վնասվածքներ չեն հայտնաբերվել: Նշված իրերի ու հագուստների վրա կրակոցի արգասիքներիմեջ մտնող վառոդային մրի հետքեր, վառոդի կիսաայրված մասնիկներ, ինչպես նաև քսայուղերին բնորոշ հետքեր չեն հայտնաբերվել: զրահաբաճկոնի, զինվորական ձմեռային բաճկոնի և զինվորական անդրավարտիքի հետազոտված հատվածների վրա առկա են կրակոցի արգասիքներ, որոնք արտահայտված են անտիմոնի և պղնձի մետաղացման հետքերի տեսքով, իսկ սաղավարտի և զինվորական բաճկոնի հետազոտված հատվածներում առկա են պղնձի մետաղացման հետքեր, որը մտնում է նաև կրակոցի արգասիքների մեջ:

Նախաքննության համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ պարզելու նպատակով, դեպքի օրը՝ 06.05.2018 թվականին նախաքննական մարմնի որոշումների հիման վրա, նշված հենակետի բոլոր զինծառայողների, այդ թվում՝ Լևոն Թորոսյանի, մարմնի տարբեր մասերից խծուծների միջոցով վերցվել են համեմատական հետազոտման նմուշներ և ուղարկվել են դատաձգաբանական փորձաքննության: Այդ փորձաքննությունների (առանձին-առանձին) եզրակացությունների համաձայն, հենակետի բոլոր զինծառայողների մոտ, բացառությամբ հանգուցյալ Լևոն Թորոսյանի, նրանց մարմնի տարբեր մասերից վերցված խծուծների վրա կրակոցի արգասիքների մեջ մտնող վառոդային մրի հետքեր, վառոդի կիսայրված մասնիկներ, ինչպես նաև քսայուղերին բնորոշ հետքեր չեն հայտնաբերվել: Սակայն նրանց մարմնի տարբեր հատվածներում հայտնաբերվել են պղնձի մետաղացման հետքեր, որը մտնում է նաև կրակոցի արգասիքների մեջ, ինչպես նաև, նրանց բոլորի մարմնի տարբեր հատվածներից վերցված խծուծների վրա առկա են եղել անտիմոն մետաղի քանակություն, որը չի գերազանցել ընդունված շեմային մակարդակը:

Լևոն Թորոսյանի դիակի արտաքին զննման ժամանակ նրա դիակի տարբեր մասերից վերցված քսուքներով նշանակված դատաձգաբանական փորձաքննության թիվ 45051803 եզրակացության համաձայն՝ ներկայացված Լևոն Թորոսյանի մարմնի տարբեր մասերից վերցված խծուծների վրա առկա են կրակոցի արգասիքներ, որոնք արտահայտված են պղնձի մետաղացման հետքերի տեսքով և ընդունված շեմային մակարդակը գերազանցող անտիմոն մետաղի քանակությամբ, իսկ կզակի շրջանից գրառումով փաթեթում առկա քսուքի վրա նաև վառոդային մրի տեսքով:

«Հակոբասար» կոչվող մարտական հենակետի բոլոր զինծառայողների մարմնի վրա հանցագործության հետքեր կամ հատուկ նշաններ հայտնաբերելու նպատակով, դեպքի օրը՝ 06.05.2018 թվականին, նախաքննական մարմնի որոշումների հիման վրա կատարվել են քննումներ, որոնց արդյունքում նրանց մարմնի վրա մարմնական վնասվածքներ, քերծվածքներ, հանցագործության կատարման մասին վկայող հետքեր կամ նշաններ չեն հայտնաբերվել:

Համաձայն դատահետքաբանական (դատամատնադրոշմային) փորձաքննության թիվ 44951802 եզրակացության՝ փորձաքննության ներկայացված ԿՁԳ-74 տեսակի XX-6896 համարի գնդացիրի և փամփշտատուփի մնակերևութների վրա պապիլյար գծանախշերի պիտանի հետքեր չկան:

Նախաքննության ընթացքում բջջային կապի օպերատորներից ձեռք են բերվել 28.04.2018թ. մինչև 06.05.2018թ. ընկած ժամանակահատվածում «Հակոբասար» կոչվող մարտական հենակետում եղած զինծառայողներից Գևորգ Հակոբյանի՝ 077-87-65-42, Գառնիկ Ավետսիսյանի՝ 093-03-80-88, Սևակ Քարտաշյանի՝ 077-01-69-69, Վալոդյա Հոխիկյանի՝ 091-81-98-29, Մինաս Միլիտոնյանի՝ 094-84-83-08 և 098-84-83-09 բջջային հեռախոսահամարների ելքային և մուտքային հեռախոսազանգերի վերծանումները, որոնց զննությամբ հայտնաբերվել են Լևոն Թորոսյանի մոր՝ 077-63-44-50 հեռախոսահամարին կատարված հետևյալ ելքային և մուտքային հետևյալ զանգերը՝

Վիվասելի 77876542,93038088,77016969,91819829,94848308,98848309 հեռախոսահամարից կայացած ՀԽ - ելքային

Cell ID	Մարզ	Հասցե	Ձև	Քաղաքի անվանում	Զանգահարող	Հեռախոսահամար	Ամսաթիվ օօ.աա.տտ	Ժամ ժժ.րր.վվ	Տևող.
28305201118251	Armavir	, v. Sardarapat	SMS	VivaCell	98848309	77634450	28.04.2018	10:04:59	0:00

Վիվասելի 77876542,93038088,77016969,91819829,94848308,98848309 հեռախոսահամարից կայացած ՀԽ - Մուտքային

Cell ID	Մարզ	Հասցե	Ձև	Քաղաքի անվանում	Զանգ Մուտքող	Հեռախոսահամար	Ամսաթիվ օօ.աա.տտ	Ժամ ժժ.րր.վվ	Տևող.
28305209122051	Tavush	, Artsvaberd TV Tower	CALL	VivaCell	77876542	77634450	02.05.2018	11:27:06	1:13
28305209122121	Tavush	, v. Choratan	CALL	VivaCell	77876542	77634450	05.05.2018	06:51:42	2:05
28305209122102	Tavush	Berd, Berd TV Tower	CALL	VivaCell	77876542	77634450	05.05.2018	13:50:25	0:37
28305209122051	Tavush	, Artsvaberd TV Tower	CALL	VivaCell	77876542	77634450	05.05.2018	15:07:46	1:05
28305209122121	Tavush	, v. Choratan	CALL	VivaCell	77876542	77634450	06.05.2018	07:04:12	4:12
28305201118081	Armavir	Armavir, t. Armavir, Shahumyan and Baghramyan str	CALL	VivaCell	98848309	77634450	28.04.2018	10:00:14	1:02
28305201118761	Armavir	, v. Mrgashat	CALL	VivaCell	98848309	77634450	28.04.2018	10:02:05	0:47
28305209122062	Tavush	, v. Artsvaberd	CALL	VivaCell	98848309	77634450	28.04.2018	19:48:31	1:33
28305209122041	Tavush	, v. Aygedzor	CALL	VivaCell	98848309	77634450	29.04.2018	17:11:36	1:04
28305209122041	Tavush	, v. Aygedzor	CALL	VivaCell	98848309	77634450	29.04.2018	18:04:25	3:51

Մասնավորապես վերծանումների արդյունքներով պարզվել է, որ դրանցում առկա են դեպքի նախորդող օրը՝ ժամը 06^{51}-ին 2 րոպե 5 վայրկյան և դեպքի օրը՝ ժամը 07^{04}-ին 4 րոպե 12 վայրկյան տևողություններով կատարված հեռախոսազանգեր մոր համարին:

Քրեական գործի նախաքննության ընթացքում հարցաքննվել են Լևոն Թորոսյանի ստորաբաժանման և զորամասի հրամանատարական կազմի սպաները, համածառայողները, ինչպես նաև զորամասի մի շարք ժամկետային զինծառայողները, վերջինիս համադասարանցիները և այլ անձինք, ովքեր ինչ-որ չափով առնչություն են

ունեցել Լևոն Թորոսյանի հետ և կատարված դեպքի հետ: Վերջիններս, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ պարզելու նպատակով հարցաքննված Լևոն Թորոսյանի հարազատները, համադասարանցիները և ուսուցիչները, համայնքի ղեկավարը նրան բնութագրել են որպես համեստ, ինքնամփոփ, խելացի, քչախոս, կոնֆլիկտների մեջ չմտնող անձնավորության: Երբևէ Լևոն Թորոսյանը չի պատմել իր նկատմամբ որևէ մեկի կողմից բռնություն գործադրելու կամ պատիվն ու արժանապատվությունն ստորացնելու մասին, մոլեխաղերի և թղթաղերի հանդեպ սեր, որևէ հակում չի ունեցել, կրոնական շեղումներ, աղանդավորական հակումներ նույնպես չի ունեցել, եղել է քրիստոնյա: Բացի այդ, համածառայողները հայտնել են, որ Լևոն Թորոսյանը կատարել է մաքրության և ինժեներական աշխատանքներ, նման հարցերի շուրջ կոնֆլիկտներ չեն եղել: Հարցաքննված վկաները հայտնել են, որ Լևոն Թորոսյանը սիրած աղջիկ չի ունեցել:

Վկա Նարեկ Բաբայանը ցուցմունք է տվել, որ հանդիսացել է Լևոն Թորոսյանի ընկերը: Երբ վերջինս վերադարձել է ուսումնական զորամասից, հանդիպել է նրան, զրուցել են, որի ընթացքում իմացել է, որ Լևոն Թորոսյանը եղել է գոհ, քանի որ ուսումնական զորամասը տանը մոտ է եղել, հաճախ են տանեցիները տեսակցել նրան, տրվել է կարճ արձակուրդ: Եղել է մի փոքր ներողսրտած՝ կրկին թիվ 21127 զորամաս վերադառնալու համար, քանի որ այն գտնվել է նրա տանից հեռու:

Վերադառնալու օրը Լևոն Թորոսյանին ճանապարհել է մարտական հերթապահության, որի ընթացքում վերջինս իրեն ասել է. «*Արի քեզ վերջնական հաջող անեմ, քանի որ պոստերից հետ չեմ գալու*»: Մտածել է, որ Լևոնը նկատի է ունեցել թշնամու կողմից խոցվելուն, ուստի նրան գոտեպնդել է: Դրանից հետո Լևոն Թորոսյանն ավելացրել է. «*Գիտեմ, թե ինչ եմ ասում*», իսկ ապա գրկախառնվել են ու նրան ճանապարհել է:

Լևոն Թորոսյանի պատմելով գիտի, որ նրա ընտանիքը գումարի կարիք է ունեցել, իրեն մի քանի անգամ ասել է, որ ընտանիքը վճարում պետք է կատարի (իր կարծիքով վարկի մարում), նրա մոտ զգացել է նեղվածություն, թե ընտանիքը որտեղից պետք է վճարի, կարող են վճարել, թե՝ ոչ: Իր հիշելով, Լևոն Թորոսյանն իր հետ նույն թեմայով խոսել է 2018թ. հունվարին, բայց կոնկրետ օրը չի հիշում:

Վկա Ստեփան Համբարձումյանը ցուցմունք է տվել, որ ծառայում է թիվ 21127 զորամասի 2-րդ գումարտակի նյութատեխնիկական դասակի ավտոապահովման ջոկում որպես ավագ վարորդ, կոչումով շարքային է: Լևոն Թորոսյանին ճանաչել է ծառայության սկզբից և ընթացքում մտերմացել են, սակայն ընկերներ չեն եղել: 2017թ. օգոստոս ամսին ուսումնական վաշտից տեղափոխվել է 5-րդ հրաձգային վաշտ և եղել է վարորդ, հետագայում տեղափոխվել է այլ վաշտեր և վերջին տեղափոխության արդյունքում նյութատեխնիկական պահպանության դասակում է ծառայում: Տեղափոխությունների արդյունքում Լևոն Թորոսյանի հետ կապը քիչ է եղել:

Սերժանտական դասընթացների գնալու համար Լևոն Թորոսյանը եղել է ուրախ և ասել է, որ հնարավորություն կունենա հաճախ գնալ և տեսակցել տան անդամներին: 2018թ. փետրվար ամսին Լևոն Թորոսյանը գնացել է սերժանտական դասընթացների ու դրանից հետո նրա հետ կապ չի ունեցել: Ուսումնական զորամաս մեկնած զինծառայողները վերադարձել են 2018թ. ապրիլի 28-ին և նույն օրը Լևոն Թորոսյանին և մյուսներին ուղարկել են մարտական հերթապահության: Այդ օրը՝ ժամը 20^{00}-ին, երբ միայնակ շարահրապարակից գնացել է դեպի զուգարան, այդ ժամանակ Լևոն Թորոսյանը ձայն տվել իրեն, բարևել են և գրկախառնվել, իսկ խոսակցության ընթացքում հարցուփորձ է արել նրա վիճակից, նորմալ, ուրախ տրամադրությունով է